ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<< ՍՊ-ԲԸԱՊՁԲ-16/01>> ծածկագրով հանձնաժողովի նիստի
(Հայտերի բացման նիստի ամփոփման մասին)

ք. Երևան **11 «հոկտեմբերի »**
2016թ.

Ժամը՝ 17:00-ին

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու **(ԳՊ/ԳԱՊ)** — *Գ.Մանուկյան*

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)** — *Ա.Ալավերդյան*, *Ա.Կարապետյան*

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** — *Լ. Աղաջանյան*, *Դ.Էլիբեկյան*

Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀՄ)** — *Ա.Մանթաշյան*

1. Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 << ՍՊ-ԲԸԱՊՁԲ-16/01>> ծածկագրով մրցույթի հայտը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել է, 2016 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 11^{00}-ին: Նիստը կասեցվել է 1 աշխատանքային օրով: Կասեցված բացման նիստի ամփոփումը տեղի է ունեցել 2016 թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 17^{00}-ին՝ ք. Երևան, Աբովյան 9 հասցեում:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

Մասնակցի անվանումը	**Գտնվելու վայրը**
<<Սաքի >> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Գորիս,

	Անկախության 2/31
<<Մեթր-Սթիլ >> ՍՊԸ	ՀՀ 0031 Երևան, փ. Լենինգրադյան 48/5-19
<<Բրուս>> ՍՊԸ	ՀՀ ք. Նոր-Հաճն, Գետամեջի խաչմերուկ
<<Զորաշեն>> ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Աշտարակի խճուղի 2բ.
<<Ոստանիկ հայրենյաց>> ՍՊԸ	Սյունիքի մարզ, Գ.Անգեղակոթ
<<Սպորտ Սիթի>> ՍՊԸ	ՀՀ ք. Երևան,Մաշտոցի պողոտա թ.5
<<Էլիտ-Սպորտ >> ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Աբովյան 9
<<Բայկ>> ՍՊԸ	ՀՀ ք.Երևան, Անդրանիկի փողոց 114/1

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջների համապատասխանության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակցների կողմից ներկայացված հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են:

«Սաքի», «Մեթր-Սթիլ», «Սպորտ Սիթի», «Զորաշեն», «Էլիտ-Սպորտ», «Ոստանիկ հայրենյաց», «Բայկ», «Բրուս» ՍՊԸ-ները ներկայացրել են բաց ընթացակարգին մասնակցելու դիմում, բաց ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն, տուժանքի մասին համաձայնություն, մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, տեխնիկական միջոցների մասին հայտարարություն, ֆինանսական միջոցների մասին հայտարարություն, աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարություն, առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական

բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություն, գնային առաջարկը՝ ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: «Մեթր-Սթիլ», «Սպորտ Սիթի», «Զորաշեն» և «Բրուս» ՍՊԸ-ները ներկայացրել են նաև ԵՏՄ արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարություն:

5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Սաքի», «Մեթր-Սթիլ», «Սպորտ Սիթի», «Զորաշեն», «Էլիտ-Սպորտ», «Ոստանիկ հայրենյաց», «Բայկ», «Բրուս» ՍՊԸ-ների ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

***6.* Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝** համաձայն հավելվածի:

7. Նախահաշվային գինը՝ ըստ չափաբաժինների, համաձայն հավելվածի:

8. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը 5 կողմ, 0 դեմ ձայնով, միաձայն որոշեց՝

ՀՀ սպորտի և երիտասարդության կարիքների համար մարզագույքի ձեռբերման նպատակով հայտարարված՝ <<ՍՊ-ԲԸԱՊՁԲ-16/01>> ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում՝

Առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝

«Սաքի» ՍՊԸ-ին N 1, 19, 36 չափաբաժիններով,

«Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին N 3, 32, 38 չափաբաժիններով,

«Սպորտ Սիթի» ՍՊԸ-ին N 4,5, 14, 16, 33, 37, 39 չափաբաժիններով,

«Զորաշեն» ՍՊԸ-ին N 6,9, 10, 11, 20, 22, 24, 26, 28, 29, 30, 35, 47, 48 չափաբաժիններով,

«Էլիտ-Սպորտ» ՍՊԸ-ին N 7, 8, 13, 15, 17, 21,23, 25, 34, 40, 41, 42,43, 44, 45, 46, 49,50 51, 52, 53, 54 չափաբաժիններով,

«Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին N 12 չափաբաժնով,

«Բայկ» ՍՊԸ-ին N 18 չափաբաժնով:

Երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել՝

«Սաքի» ՍՊԸ-ին N 6, 22 չափաբաժիններով,

«Սպորտ Սիթի» ՍՊԸ-ին N 1, 12, 24, 28 չափաբաժիններով,

«Զորաշեն» ՍՊԸ-ին N 3, 5, 19, 32, 37, 38, 42, 49 չափաբաժիններով,

«Էլիտ-Սպորտ» ՍՊԸ-ին N 9, 11, 29, 30, 35 չափաբաժիններով,

«Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին N 16, 36, չափաբաժնով,

«Բրուս» ՍՊԸ-ին N 10, 20, 26, 47, 48 չափաբաժնով:

9. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում դրա հիմնավորումը

Գնման ընթացակարգը թիվ 2, 27, 31,55 չափաբաժիններով հայտարարել չկայացած՝ armeps.am համակարգում կառուցվածքային սխալի և հայտ չներկայացնելու պատճառով (հիմք՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը):

10. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

11. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Հաջորդ՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման և հրապարակման նիստը տեղի կունենա ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետին համապատասխան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին էլեկտրոնային եղանակով տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ 21.10.2016թ., ք. Երևան, Աբովյան 9 հասցեում, ժամը 11:00-ին:

12. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.